Վեցերորդ հաղորդում

Քրիստոսի՝ որպես Աստծու անդրանիկ Որդու եղբայրներ

Գրվածքների ընթերցում. Բ Թգ 7:12ա, 14ա, Հռմ 1:3-4, 8:28-30, Եբր 2:10-12, Ա Կրթ 15:31, 36

I. «Քարձրացնելու եմ քո սերմը.... Ես նրա Հայրն եմ լինելու, և նա Իմ որդին է լինելու»՝ Բ Թգ 7:12ա, 14ա.

Ա. Այս խոսքը համապատասխանում Հռմ 1:3-4-ում Պողոսի ասածին այն մասին, որ Քրիստոսը՝ որպես Դավթի սերմը, Իր մարդկայնության ու հարության մեջ Աստծու Որդի սահմանվեց:

Բ. Բ Թագավորաց 7-րդ գլխի խորքային նշանակությունն այն է, որ Եռամեկ Աստված Իր պատրաստված ու ավարտունացած Երրորդության մեջ Իրեն ներդնում է Իր ընտրած մարդկանց մեջ:

Գ. Եբր 1:5բ-ի համաձայն, որը մեջբերում է Բ Թգ 7:14ա խոսքը, Դավթի սերմը Քրիստոսն է՝ որպես Աստծու անդրանիկ Որդին, ով ունի և՛ աստվածայնություն, և՛ մարդկայնություն՝ Եբր 1:5ա, 6:

Դ. Բ Թգ 7:12ա-ում «քո սերմը» և 14ա-ում «Իմ որդի» արտահայտությունները ենթադրում են, որ Դավթի սերմը դառնալու էր Աստծու Որդին, այսինքն, որ մարդկային սերմը դառնալու էր աստվածային Որդի՝ Հռմ 1:3-4:

Ե. Սա ենթադրում է, որ Իր տնտեսության մեջ Աստծու մտադրությունն Իրեն մարդ դարձնելն է, որպեսզի մարդուն դարձնի Աստված կյանքով ու բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ:

Զ. Դավթի սերմի՝ Աստծու Որդին դառնալու վերաբերյալ այս խոսքը որոշակիորեն շարունակվում և զարգանում է Նոր Կտակարանում՝ Մտթ 22:41-45, Հյտ 22:16:

II. Գործքի 13-րդ գլխում Պողոսն ասում է, որ Դավթի սերմից «Աստված, խոստման համաձայն, Իսրայելի համար Փրկիչ բերեց՝ Հիսուսին» (խ. 23), և որ «այդ խոստումն Աստված լիովին կատարեց.... հարուցանելով Հիսուսին, ինչպես և երկրորդ Սաղմոսում է գրված. «Դու Իմ Որդին ես, Ես այս օրն եմ Քեզ ծնել»»» (խ. 33).

Ա. 32 և 33-րդ խոսքերում տեսնում ենք, որ Քրիստոսը՝ որպես Աստծու անդրանիկ Որդին, խոստացվել էր հայրերին, և Աստված կատարեց այդ խոստումը՝ Հիսուսին հարուցանելով:

Բ. Հարությունը ծնունդ էր Հիսուս մարդու համար.

1. Նա Իր հարության մեջ Աստծուց ծնվեց և դարձավ Աստծու անդրանիկ Որդին բազում եղբայրների մեջ՝ Հռմ 8:29:
2. Նա հավիտենությունից Աստծու միածին Որդին էր՝ Հվի 1:18, 3:16:
3. Իր մարմնացումից հետո հարության միջոցով Նա Աստծուց ծնվեց Իր մարդկայնության մեջ և դարձավ Աստծու անդրանիկ Որդին՝ Եբր 1:6:

Գ. Պողոսը կարողացավ տեսնել Տիրոջ հարությունը Սղմ 2:7-ում. «Դու Իմ Որդին ես, Ես այս օրն եմ Քեզ ծնել».
1. Պողոսն «այսօր» բառը կիրառում է Տիրոջ հարության օրվա նկատմամբ:
2. Սա նշանակում է, որ Քրիստոսի հարությունը Նրա՝ որպես Աստծու անդրանիկ Որդու ծնունդն էր:
3. Հիսուսը՝ Մարդու Որդին, ծնվեց որպես Աստծու Որդին՝ մեռելներից հարուցանվելով, ուստի Աստծու՝ Հիսուսին մեռելներից հարուցանելը Նրան Իր ծնելն էր՝ որպես Իր անդրանիկ Որդու՝ Գրծ 13:33:

Դ. Մարմնացման միջոցով Աստծու միածին Որդին մարդկայնություն հագավ և Աստվածամարդ դարձավ (Հվի 1:14, 18, Ղկս 1:35). այնուհետև հարության մեջ այս Աստվածամարդն Աստծուց ծնվեց՝ դառնալով Նրա Անդրանիկը (Գրծ 13:33, Եբր 1:6, Հռմ 8:29).
1. Նախքան մարմնացումը Աստծու միածին Որդին մարդկային բնություն չուներ. Նա միայն աստվածային բնություն ուներ:
2. Հարության մեջ Աստծու անդրանիկ Որդին ունի մարդկային բնություն, ինչպես նաև աստվածային բնություն:

Ե. Իր հարության միջոցով Քրիստոսը ծնվեց որպես անդրանիկ Որդին ու միևնույն ժամանակ Նրա բոլոր հավատացյալները ծնվեցին որպես Աստծու բազում որդիները՝ Ա Պտ 1:3, Եբր 2:10.
1. Այդ բազում որդիների մեջ միայն Անդրանիկն է Աստծու միածին Որդին՝ Հվի 1:18, Ա Հվի 4:9:
2. Իր հարուցանված մարդկայնության մեջ Աստծու այս միածին Որդին նաև Աստծու անդրանիկ Որդին է՝ Հռմ 8:29:
3. Անդրանիկն ունի և՛ աստվածայնություն, և՛ մարդկայնություն, և մենք՝ Նրա հավատացյալներս՝ որպես Աստծու բազում որդիներ, նույնպես ունենք և՛ մարդկային բնություն, և՛ աստվածային բնություն՝ Բ Պտ 1:4:

III. «Դավթի սերմը Աստծու Որդի է դառնում» արտահայտությունը խոսում է հարության միջոցով Քրիստոսի՝ Աստծու անդրանիկ Որդի սահմանվելու գործընթացի մասին՝ Բ Թգ7:12-14ա, Հռմ 1:3-4, Մտթ 22:45, Հյտ 22:16.

Ա. Պողոսն ասում է, որ ինքն առանձնացված էր առ Աստծու ավետարանը, որն Աստծու Որդու վերաբերյալ է, ինչը ցույց է տալիս, որ Աստծու ավետարանը որդիության ավետարան է Քրիստոսի Մարմնի իրականության համար՝ Հռմ 1:1, 3-4, 8:28-30, 12:5:

Բ. Հռմ 1:3-4-ում ասվածը Բ Թգ 7:12-14ա խոսքերում նախատիպերով ներկայացված մարգարեության իրականացումն է, որը բացահայտում է այն խորհուրդը, որ Աստված մարդ դարձավ, որպեսզի մարդուն Աստված դարձնի կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ.
1. Մարմնացման միջոցով Քրիստոսը՝ Աստծու միածին Որդին Իր աստվածայնությամբ (Հվի 1:18), մսեղի՝ մարդկային բնություն

հագավ, որն աստվածայնության հետ ոչ մի ընդհանուր բան չուներ. Իր մարդկայնության մեջ Նա Աստծու Որդին չէր.

ա. Հիսուսն Իր մարդկայնության մեջ Դավթի սերմն էր՝ Աստծու հին ստեղծագործությանը (հին մարդուն՝ Հռմ 6:6) պատկանող մարդկային սերմը՝ Կող 1:15բ:

բ. Երբ Քրիստոսը խաչի վրա մեռավ որպես Դավթի սերմն Իր մարդկայնության մեջ, Նա խաչեց հին մարդուն՝ հին ստեղծագործությամբ հանդերձ, ոչնչացրեց բանսարկուին, դատապարտեց մեղքը մսեղիում և դատեց աշխարհը՝ Հռմ 6:6, Եբր 2:14, Հռմ 8:3, Բ Կրք 5:21, Հվի 3:14, 12:31:

2. Հարության մեջ Նրա մարդկայնությունն աստվածացվեց, որդիացվեց. դա նշանակում է, որ Նա Աստծու Որդի դարձավ ոչ միայն Իր աստվածայնության մեջ, այլև Իր մարդկայնության մեջ՝ Հռմ 1:3-4.

ա. Հարության մեջ Նա Աստծու Որդի սահմանվեց՝ Աստծու Անդրանիկ Որդի դարձվեց, ով և՛ աստվածայնություն ունի, և՛ մարդկայնություն ՝ 8:29:

բ. Խաչելությունը Նրա սահմանվելու, փառավորվելու, հարուցանվելու լավագույն միջոցն էր.

1) Եթե սերմը հողում թաղվելու միջոցով մեռնի, ի վերջո կծլարձակի, կաճի և կծաղկի, քանի որ սերմի կյանքի գործելը սկսվում է իր մահվան հետ միաժամանակ՝ Հվի 12:23-24:

2) Քրիստոսի մեջ եղող աստվածայնությունը՝ սրբության Հոգին, Նրա մահվան մեջ գործուն դարձավ, և հարության մեջ Նա «ծաղկեց» որպես Աստծու Որդին:

3) Ըստ Իր մսեղիի՝ Նա խաչվեց, բայց ըստ Իր Հոգու՝ Նա ուժեղացվեց, առավելագույն չափով գործուն դարձվեց, որպեսզի աստվածայնությունը Քրիստոսի մարդկայնության մեջ դնի՝ այն աստվածային դարձնելու համար. ահա թե ինչ է նշանակում սահմանել, և սա որդիացնելն է՝ Ա Պտ 3:18:

գ. Քրիստոսի մարդկայնությունը սահմանվեց, նշվեց, բարձրացվեց սրբության Հոգով՝ Քրիստոսի աստվածայնությամբ. այսպես Քրիստոսի մարդկայնությունը բարձրացվեց և աստվածայնության մեջ բերվեց, այսինքն՝ Քրիստոսը դարձյալ ծնվեց Իր մարդկայնության մեջ՝ Աստծու անդրանիկ Որդին դառնալով՝ Գրծ 13:33.

1) Քրիստոսը հարության մեջ առաջինը վերածնվեց՝ Հռմ 8:29.

ա) Նրա մարդկայնությունը ծնվեց Իր մոր որովայնում. այն մարդկային էր, և այն պետք է համարել ոչ թե Աստծու Որդի, այլ Մարդու Որդի:

բ) Քրիստոսի հարությունը բարձրացրեց Նրա մարդկայնությունը և Նրա աստվածայնությունն այս մարդկայնության մեջ դրեց. այսպիսով՝ այս հարությամբ Իր

մարդկայնությունը դարձյալ ծնվեց՝ Աստծու Որդու մասը դառնալով:

2) «Նմուշօրինակը» Աստծու անդրանիկ Որդին է, իսկ վերարտադրությունը Աստծու բազում որդիներն են՝ «նմուշօրինակի» անդամները, որոնք դառնում են Նրա Մարմինը, որն ավարտուն կանում է Նոր Երուսաղեմում՝ Ա Պտ 1:3:

IV. «Դավթի սերմը Աստծու Որդի է դառնում» արտահայտությունը խոսում է հարության միջոցով մեր՝ Աստծու բազում որդիներ սահմանվելու գործընթացի մասին՝ Եբր 2:10-11.

Ա. Քրիստոսն արդեն Աստծու Որդի է սահմանվել, իսկ մենք դեռևս սահմանվելու գործընթացում ենք՝ որդիացվելու, աստվածացվելու գործընթացում՝ Հռմ 8:28-29:

Բ. Աստծու Որդու կյանքը տնկվել է մեր հոգու մեջ՝ խ. 10.

1. Այժմ մենք հողում ցանված սերմի նման պետք է մահվան և հարության գործընթաց անցնենք՝ Հվի 12:24-25:
2. Սա սպառում է արտաքին մարդուն, բայց ներքին կյանքին աճելու, զարգանալու և վերջնարդյունքում ծաղկելու հնարավորություն է տալիս. սա հարությունն է՝ Ա Կրք 15:31, 36, Բ Կրք 4:10-12, 16:
3. Որքան շատ ենք կյանքում աճում կյանքում մեր փոխակերպման համար, այդքան շատ ենք Աստծու որդիներ սահմանվում.
   ա. Որպեսզի աճենք, մեզ անհրաժեշտ է առ Տերը շրջված սիրտ, և սիրտ, որը մաքուր է Նրա հանդեպ՝ 3:16, 18, Մտթ 5:8, Բ Տմթ 2:22:
   բ. Աճելու համար պետք է անխարդախ կաթով և խոսքի պինդ կերակրով սնվենք՝ Ա Պտ 2:2, Եբր 5:12-14:
   գ. Աճելու համար մեզ անհրաժեշտ է օժտված անդամների ջրելը՝ Ա Կրք 3:6 բ, Հվի 7:37-39, Առկ 11:25:
   դ. Մեր միջավայրում կատարվող բոլոր բաների արդյունքում և մեր անհաջողությունների միջոցով մեր նողկալի «ես»-ը տապալվում է, և Տերը մեր ներսում աշխատելու ավելի մեծ հնարավորություն է ունենում՝ Հռմ 8:28-29:
   ե. Մի օր այս գործընթացը կավարտվի, և մենք հավիտենապես նույնը կլինենք, ինչ Քրիստոսն է՝ Աստծու անդրանիկ Որդին, մեր հոգում, շնչում և մարմնում՝ Ա Հվի 3:2, Հռմ 8:19, 23, Օրհներգ 686, տուն 2:

Գ. Հարությամբ Քրիստոսն Իր մարդկայնության մեջ Աստծու Որդի սահմանվեց, և այսպիսի հարության միջոցով մենք նույնպես գտնվում ենք Աստծու որդիներ սահմանվելու գործընթացում՝ Հռմ 8:11.

1. Մեր սահմանվելու, որդիացվելու, աստվածացվելու գործընթացը հարության գործընթաց է, որը ներառում է չորս գլխավոր տեսանկյուն՝ սրբացում, փոխակերպում, կերպարանակցում և փառավորում՝ 6:22, 12:2, 8:29-30:

2. Սահմանման գործընթացի բանալին հարությունն է, այսինքն՝ ներբնակվող Քրիստոսը՝ որպես հարուցանող Հոգին, սահմանող Հոգին, կյանքի զորությունը մեր հոգում՝ Հվի 11:25, Հռմ 8:10-11, Գրծ 2:24, Ա Կրթ 15:26, 5:4.
   ա. Մեզ հույժ անհրաժեշտ է սովորել Հոգու համաձայն քայլել, սահմանող Հոգուն վայելել և Նրան փորձառաբար ապրել՝ Հռմ 8:4, 14:
   բ. Որքան շատ ենք Հոգուն դիպչում, այնքան շատ ենք սրբացվում, փոխակերպվում և փառավորվում՝ դառնալով Աստված կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ, Քրիստոսի Մարմինը կառուցելու համար, որը կավարտուն ացնի Նոր Երուսաղեմը՝ Ա Կրթ 12:3, Հռմ 10:12, 8:15-16, Գղտ 4:6:

V. Աստծու մտահղացումն Իր անդրանիկ Որդու բազում եղբայրներին առաջացնելն է Իր արտահայտության համար.

Ա. Հռմ 8:29-ում ասվում է, որ Աստված մեզ նախասահմանել է կերպարանակից լինելու Իր Որդու պատկերին, որպեսզի Նա «Անդրանիկը լինի բազում եղբայրների մեջ»:

Բ. Հրաշալի փաստ է այն, որ Անդրանիկը բազում եղբայրներ ունի՝ Մտթ 28:10, Հվի 20:17:

Գ. Քրիստոսն Անդրանիկն է՝ աստվածայնությամբ և մարդկայնությամբ, իսկ մենք Նրա բազում եղբայրներն ենք՝ մարդկայնությամբ և աստվածայնությամբ. թե՛ Անդրանիկը, թե՛ Աստծու բազում որդիները հարության մեջ ծնվել են նույն Հայր Աստծուց:

Դ. Եբր 2:11-ում ասվում է. «Թե՛ Սրբացնողը, թե՛ սրբացվողները՝ բոլորը Մեկից են, ինչի պատճառով Նա ամոթ չի համարում նրանց եղբայրներ կոչել»:

Ե. Անդրանիկը «նախօրինակն» է, իսկ մենք՝ «զանգվածային արտադրությունը». Քրիստոսը նմուշը, «կաղապարը», նմուշօրինակն է, և Աստված մեզ զետեղել է Նրա մեջ, որպեսզի «կաղապարվենք» Նրա պատկերին:

Զ. Որպես Նրա բազում եղբայրներ՝ մենք այժմ հասունանալու գործընթացում ենք՝ կերպարանակցվելով Նրա պատկերին:

Է. Եբր 2:12-ում, որը մեջբերում է Սղմ 22:22-ից, ասվում է. «Քո անունն Իմ եղբայրներին եմ ազդարարելու. եկեղեցու մեջտեղում օրհներգելու եմ Քեզ»:

Ը. Եբր 2:12-ի համաձայն՝ եկեղեցին ընդհանրական կազմություն է Աստծու անդրանիկ Որդու եղբայրներից, որոնք իրար միացված ու միաձուլված երկու բնություն և երկու կյանք ունեն:

© 2026 Living Stream Ministry